# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2024 թվականի № 455-Ա**

## ԱՆԱՀԻՏ ԿՈՆՋՈՈՒՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը և *Անահիտ Կոնջորյանի*՝ 2024 թվականի հոկեմբերի 31-ի № 45 գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Անահիտ Նիկոլայի Կոնջորյանի* նկատմամբ կիրառել *«նկատողություն»* կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2024 թվականի նոյեմբերի 13**
**ք. Հրազդան**